ցած ուրախութիւնն ալ։ Այս մտածութիւններով՝ ինչպէս որ մերթ ընդ մերթ հրատարակեր ենք, առ ժամն ալ ասոնցմէ մէկը կ'ընծայենք Լուսաւորչասէր որդւոց իբրև ախորժական նուէր մը՝ իրենց սրբազան Հօրը և անոր աստուածարեալ որդւոցը ու Թոռանցը յիշատակը տօնախմբած օրերը։ Այսոր թէ՝ լերը տխուր են, ու արցունքներ վազցնելով զարնուած, ուստի շատ ալ սրտաշարժ, և իբր թէ թարգման մը ճշմարիտ հայրենասիրաց ըղձիցն ու փափագանացը։ Մե՛ղք որ քերթողը՝ Հայկական Արնարին տակ իւր անունը քօղարկելով՝ իր սիրտը միայն ու հայրասէր զգացմունքները ուզեր է մեզի ծանօթացընել, առանց իր բնիկ անունն յայտնելու։

ԱՌ ՀԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Գ Ր Ի Գ Ո Ր Ի Ո Ս

ԱՐՏԱՍՈՒԱՒՔ ՄԱՂԹԵԱԼ

Այսաւր ժողովեալ մանկունք, Հայր պատուական, զքեզ փարիմք սիրով.
Ո՛վ Գրիգորիոս սուրբ Լուսաւորիչ քո տառապեալ հաւտիդ.
Օ՜քո զանտանելին յիշեա զչարչարանս, ամաչեմք 'ի քէն՝
Որք աւտարացաք 'ի շնորհայն, ո՛վ Ճրագնաւոր, մեր ապերախտ գործովք.
Վա՜յ մեզ գերելոցս, վա՜յ մեզ արդ. ո՞ւր զուարճասցուք յիշատակի աւուրս.
Բարձաւ խնդութիւն 'ի մէնջ և գերեցա՜ք յաւտար ազգաց։
Զո աստուածեղէն տաճարք ահա փարախ բարբարոսաց,
Մեք ո՞ւր տաւնեսցուք ըզտաւնս անտէր անտունքս և գերութեամբ անյոյսք.
Դու Հայր մեզ եկիր այսաւր և մեք հեռի 'ի չարչարանաց տեղւոյն։
Այսաւր է քո տաւն, ո՛վ Տէր, և մեք սրգաւոր յուրախութեան աւուրս.
Ո՞ւր ըզքեզ, սուրբ Գրիգոր, պատուեմք. 'ի Շողակաթն թէ 'ի Բագուանդն մեծ,
Ո՞ւր զքեզ աւրհնեսցուք, Վ՜ըկայ, 'ի Հռիփսիմեանքն թէ 'ի Վիրապն սուրբ.
Յափշտակեցին 'ի մէնջ, մատեան հեթանոսք 'ի ժառանգութիւնս քո.
Ողբա՜ ըզմեզ այսաւր, ո՛վ Հայր, զքո զաւտարացեալ մանգունքս.
Աշխարհն աւտարաց մատնած, մեք պանդուխտք յերկրի աւտար շրջիմք.
Ոչիք մեզ մխիթար վըշտիս, այլ եմք պատկառած 'ի մէջ ազգաց բազմաց.
Ո՛չ կարեմք տանել, ո՛վ Հայր, ոչ կարեմք տանել զանտանելի զայս վիշտս.
Յայս 'ի տաժանմանց ստիպեալք, աղաղակեմք առ քեզ լալով յերկինս.
Լուր զհառաչանս, լուր, Տէր, և այց ուրա քո մոլորեալ հաւտիս.
Օ՜վիրաւք խոցոտեալ մարմինդ ցոյց Քրիստոսի և հաշտեցո ընդ մեզ.
Թերևս լիցի մեզ դարձ և քաւեսցէ զբազմութիւն մեղացն։
Մեղաք անաւրէնքս, մեղաք և չիք բանալ մեզ զբերանս մեր.
Ամա՛ւթ քեզ եղաք, սո՛ւրբ Տէր, և անպըտուղ քոյ սերմանըն երկիր.
Բայց մի՛ զմեզ խպաւ ատեր, Հա՛յր որդեսէր և բարեգութ Հովիւ.
Ո՛ւ քեզ պաղատիմք, ո՛վ Հայր, և աղաչեմք կեցո դարձեալ զանկեալքս։

Զայն բարձեալ յերկինս առ քեզ
Բ՚յսաւր մեք գոչեմք յերկրէ.
Սուրբ Հայրըդ Գրիգորիոս,
Մեղմք տառապեալ որդիքս։
Տաւն յիշատակի քո մեծ
Ի մէջ ընդհանուր աղգաց
Ամք ուրախանան 'ի քեզ
Պար մեծ խնձոյից առեալ՝։
Իսկ մեզ յաճախէ այսաւր
Սուգ և արտասուաց հեղումն,
Օ՚ի զքեզ մեծարել ցանկամք
Եւ չիք մեզ տաճար կամ տուն։
Օ՚ի ճոխ ճշմարիտ տեսիլն
Բ՚ն մեզ աւարտեալ լըցաւ.
Գայլք գառանց եղեն հովիւք
Եւ դառնացուցին զԲ՚ստուած։
Մեղք մեր և մերոցըն հարց
Յաղթեաց ողորմած կամայն.
Սակս որոյ մատնեալ եղաք
Տերանց խըստասիրտ արանց։
Արով ճարակեցին ըզմեզ
Ի ընջեցին զաթոռ տերանցն,
Ընդ մեր թագաւոր այսաւր
Եւ ոչ քահանայ յաթոռ։
Օ՚քո զաստուածեղէն ձեռացդ
Օ՚սրբբարան շինեալ տաճարն
Ապրեցին անասրբ ձեռաւք
Օ՚պաշտաւնեայս 'ի նմա զենեալ։
Օ՚քո չարչարանաց սուրբ վայրն
Ինքեան սեփական ստացան,
Եւ մեք կարօտեալք այսաւր
Ընտիրք հանդիսի տեղի։
Օ՚այն իմաստալի հրաշիցն
Շ՚ինեալ ըզգալի խորանն՝
Իսկ կեդարացիքն ունին
Հաւտից և խաշանց փարախ։
Սուգ է կերակուրըն մեր,
Ըմպելի՝ արտասուք աղի.

Ոչիք որ մխիթարել լինի,
Կամ զայս աղաւթիւք կարձէ։
Մեզ Երեմիաս պիտէր
Որ զայս ողբալով հընչէր.
Կամ այն Դանիէլն մեծ,
Որ խոստովանէր ուղիղ։
Մեզ երեք Մանգունքն այսաւր՝
Թերևս ըզգային զվըտանգս
Դերեաց՝ Թախանձել զաստուած
Մաղթէին լինել գըթած։
Ծանրացեալ բեռանց վշտաց,
Յիմար իմաստից արար.
Յոյս մեր փրրկութեան հատաւ
Ի՚մեղս խոստովանել հեղգամք։
Հայր սուրբ քո գըթած կամաւքդ
Ի մեզ յանըզգայքս նայեաց.
Լեր մեզ վերըստին բըժիշկ
Ի յայս հոգեկան վիրաց։
Մի, Տէր, բարկանար խստաւ
Մի յանաւրինեալս հայիր.
Ո՛վ Հայր պատուական և սուրբ
Ընդալ զպաղստանըս մեր։
Բ՚յսաւր զչարչարանըս քո
Օ՚այն անտանելին և զմեծ
Տուր մեզ քաւութեան նըւէր
Հաշտել Քրիստոսի ընդ մեզ։
Փոխան անաւրէն հաւտիս,
Օ՚քեզ գոլ աւրինացն անբիծ
Տամք երրորդութեան միջնորդ
Քահանայ քաւեա ըզմեզ։
Ամք հատուցանեմք զպատիժ
Մեղաց մեր այսաւր յաշխարհս,
Մի բաժանեսցուք 'ի քէն
Տաւնել յանվախձան 'ի կեանսդ։
Ո՛վ սուրբ Հայր Գրիգորիոս,
Բ՚ս զմեր գոհութեան նըւէր
Տուր Երրորդութեանդ 'ի փառս
Բ՚յժմ և յաւիտեանս. Բ՚մէն։

---

1 Կ՚ակնարկէ անշուշտ բաց 'ի Յունաց նաև Նէապոլսեցւոց ու բոլոր Խալիոյ հարաւակողման Լուսաւորչին մեծահանդէս տօնախմբութիւնը, վասն զի սրբոյն Գրիգորի աստուածարեալ գըլուխն ու ձեռաց Թաթը, ինչպէս նաև շղթան՝ որոնով որ կապուեցաւ, ու մաս մ՚ալ մահակէն որով որ բրածեծ եղաւ, 770ին ատենները Կոստանդնուպօլսէն՝ ուր մեծ պատուով կը պահուէին, քանի մը կուսանաց ձեռքովը Նէապոլիս կամ Նաբոլի քաղաքը տարուեցան, ու մեծակառույց եկեղեցի մ՚ալ իրեն նուիրեցաւ. քաղաքացիք իրենց ջերմեռանդութեանը համեմատ մեծամեծ շնորհքներ ընդունելով սուրբ Լուսաւորչէն՝ զինքը իրենց երկրին մեծ պաշտպաններէն մէկը կը համարին ու փառաւոր թափօրներով տօնն ալ կը կատարեն սեպտեմբերի 30ին (18) ուրբաթիւք։ Նոյն ջերմեռանդութիւնը նաև Հռոմայ բոլոր սահմանին մէջ տարածուելով իննօրեայ պատրաստութեամբ Լուսաւորչի տօնը կը կատարեն՝ առանձին մեր ազգին համար աղօթքներ ալ մատուցանելով. այս բանս ալ պզտի գրքիւ մը չէ մեզի մեր հօրը ունեցած եռանդուն սէրն ու ջերմեռանդութիւնը օրէ օր աւելցընելով աճեցընելու՝ փոյթ ունենալով մեր հօրը նաև երկրիս վայ առաւելագոյն փառացը։